Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր
ֆիզ.-մաթ. գիտ. թեկ., փիլ. գիտ դոկտոր
Ա. Ս. Ավետիսյան

«___» _____ 2020թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Մարինե Կարապետի Շահբազյանի
«Արդիհասարակությանտեղեկատվայնացմանշարժիչ ուժերը և տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրը□ սոցիալ-փիլիսոփայական վերլուծություն» թեմայովԹ.00.01- «Փիլիսոփայություն(փիլիսոփայական գիտություններ)» մասնագիտությամբփիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

«Արդի հասարակության տեղեկատվայնացման շարժիչ ուժերը և տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրը□ սոցիալ-փիլիսոփայական վերլուծություն» թեմայով թեկնածուական ատենախոսությունը «Փիլիսոփայություն(փիլիսոփայական գիտություններ)» փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար՝ Թ.00.01-«Փիլիսոփայություն (փիլիսոփայական գիտություններ)» մասնագիտությամբքննարկվել է ՀՌՀ փիլիսոփայության ամբիոնում, և առաջատար կազմակերպության կարծիքը հաստատվել է 2020 թ. հունիսի 08-ին՝ նիստի ժամանակ՝ (արձանագրություն № 6առ 08/06/2020թ.): Նիստին մասնակցում էին՝ Գ. Է. Գալիկյանը՝ փիլ. ամբիոնի վարիչ, փիլ. գիտ. թ., դոցենտ, Ս. Հ. Հովհաննիսյանը՝ փիլ. գիտ. դոկտոր,

պրոֆեսոր, Մ. Գ. Կղջանյանը՝ փիլ. գիտ. թ., դոցենտ, Տ. Ա. Հովհաննիսյանը՝ փիլ. գիտ. թ., դոցենտ, Մ. Ա. Քալաշյանը՝ փիլ. գիտ. թ.,ավագ դասախոս։

Մարինե Կարապետի Շահբազյանի
«Արդի հասարակության տեղեկատվայնացման շարժիչ ուժերը և տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրը. սոցիալ-փիլիսոփայական վերլուծություն» ատենախոսության մասին

Ներկայացվող ատենախոսությունը նվիրված է գերարդիական այնպիսի մի հիմնախնդրի, ինչպիսին հասարակության տեղեկատվայնացումը և տեղեկատվական անվտանգությունն է ժամանակակից հասարակությունում։ Ատենախոսությունում բարձրացված հարցադրումներն ու դիտարկված խնդիրներն առնչվում են, առանց բացառության, հասարակության բոլոր կառուցվածքային օղակներին և տարրերին։ Ատենախոսը թեման ներկայացրել է համակողմանիորեն դիտարկելով արդի հասարակության համար կենսական նշանակություն ունեցող հիմնահարցեր, մանրամասն վերլուծել է ինչպես «տեղեկատվական հասարակություն», այնպես էլ «անվտանգություն» հասկացությունները և դրանց միասնական դիտարկմամբ ներկայացրել տեղեկատվական անվտանգության հայեցակարգի ու քաղաքականության մշակման անհրաժեշտությունը։ Իրավացիորեն ընդգծված է մշակված և հստակ ձևակերպված տեղեկատվական անվտանգության քաղաքականության ռազմավարության բացակայությունը, որի առկայության չափազանց կարևոր նշանակությունը կասկած չի հարուցում հատկապես հետպատերազմական իրադրությունում գտնվող հայ հասարակության համար։
Ատենախոսությունը ներկայացված է գրագետ հայերենով և ունի տրամաբանական հստակ կառուցվածք։ Երկու գլուխներում, որոնք բաղկացած են համապատասխանաբար երեք և չորս ենթագլուխներից, ատենախոսին հաջողվել է հետազոտության խնդիրների համակողմանի քննարկմամբ հասնել նպատակի իրականացմանը, այն է՝ «հետխորհրդային հասարակություններում տեղեկատվական անվտանգության համակարգի գործոնների ձևավորման և զարգացման օրինաչափությունների բացահայտումը և, այդ առումով, երաշխավորությունների մշակումը»։
Այնուամենայնիվ, աշխատանքը զերծ չէ թերություններից և բաղթողումներից։
Առաջաբանում առանձնացված «Հետազոտության գիտական աղբյուրները և մշակվածության աստիճանը» հատվածում գիտական աղբյուրների բաժանումը ոչկանոնավոր է, քանի որ բաժանումն իրականացված է ոչ մեկ հիմքով։ Իսկ ինչ վերաբերվում է օգտագործված գրականությանը, ապա նրանում գերակշռում են ռուսալեզու մտածողների աշխատությունները, այնինչ, թեման ավելի ընդհանրական և համակողմանիորեն դիտարկված կլիներ, եթե վերջիններիս հետ մեկտեղ ուսումնասիրված լինեին նաև արևմտյան ժամանակակից մտածողների ստեղծագործությունները։ Արևմտյան փիլիսոփայական հանրությունը, ամերիկյան մտածողների հետ մեկտեղ, տեղեկատվական

հասարակության մասին, եթե ոչ առավել առաջադեմ, ապա գոնե ոչ պակաս արդիական հարցադրումներ ու լուծումներ է առաջարկում։

Աշխատանքում հանդիպում են չհիմնավորված պնդումներ, օրինակ՝ թեմայի արդիականության հիմնավորման մեջ խոսվում է «ժամանակից հետ մնալու» մասին (էջ 3), որտեղ չի հստակեցվում, թե ինչպես պետք է հասկանալ տվյալ բառակապակցությունը։ Որտե՞ղ և ինչպե՞ս է «ժամանակից հետ մնալը», ինչպես ատենախոսն է նշում, հղի բազմաբնույթ ռիսկերով, որոնց հետևանքները կործանարար կլինեն անմրցունակ ազգային պետությունների տնտեսության, սոցիալական ոլորտի, գիտության, կրթության և մշակույթի համար։ Մեկ այլ տեղ, հետխորհրդային հասարակությունների արդիականացման գործընթացում արևմտյան մոդելի կիրառումը համարվում է սխալ քաղաքականություն, և հիմնական գործոն, որը նպաստել է ազգային անվտանգության ապահովման խնդրի վերհանմանն ու զարգացմանը (էջ 18-19)։ Կամ եզրակացությունում հանդիպող հետևյալ միտքը. «Խնդիրն այն է, որ մեզանում արդյունավետ տեղեկատվական քաղաքականության մշակման թերագնահատումը կապված է կառավարող ընտրանու միակողմանի տեխնոկրատական մտածողության հետ» (էջ 145)։ Նման բացարձակ պնդումները աշխատանքին հաղորդում են միակողմանիություն ու թույլ չեն տալիս խնդիրը դիտարկել բազմակողմանիորեն։

Աշխատանքում հանդիպում է «տեղեկատվության հիմնախնդիր» եզրույթը, որի հետ կարելի է չհամաձայնվել, հաշվի առնելով, որ տեղեկատվությունն ինքը չի կարող լինել հիմնախնդիր, այլ կարելի է առանձնացնել հիմնախնդիրներ, որոնք առնչվում են տեղեկատվության անվտանգությանը, կիրառմանը, փոխանցմանն ու պաշտպանությանը։

Մեկ այլ նկատառում ևս՝ կապված հասկացութային ապարատի քննարկման հետ. աշխատանքի բավականին մեծ հատված նվիրված է «տեղեկատվություն», «տեղեկատվական պաշար» և «տեղեկատվայնացում» հասկացությունների, ինչպես ատենախոսն է նշում, համեմատական վերլուծության որոշ մեթոդաբանական հարցերին (էջ 41), սակայն սրանք հանդիսանում են անհամեմատելի հասկացություններ, հետևաբար հստակ չի, թե ինչը ինչի հետ է համեմատական վերլուծության ենթարկվում։ Ատենախոսության նպատակը և խնդիրները սահմանելիս ատենախոսի կողմից առանձնացված չորս խնդիրներից միայն վերջինն է վերաբերվում Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության խնդիրներին, սակայն երկրորդ գլխի երկրորդ ենթագլխից սկսած հիմնահարցերի նկարագրությունն ու վերլուծությունը հիմնականում Հայաստանի Հանրապետության և ետխորհրդային պետությունների օրինակով է արված, այնինչ այստեղ ևս կարելի էր դիտարկել արևմտյան ու ամերիկյան հասարակությունների առավել հարուստ փորձը։ Ըստ այդմ, եզրակացության դրույթներից գրեթե բոլորը Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության ռազմավարության և քաղաքականության վերլուծության մասին են։ Ատենախոսությունում առկա են նաև ոչ նշանակալի տեխնիկական վրիպակներ, կապված որոշ հասկացությունների թարգմանված (հայերենացված) տարբերակների և դրանց միջազգային եզրույթների միաժամանակյա օգտագործման հետ։ Օրինակ,

տեքստում կարելի է հանդիպել ինչպես «կոմունիկացիա», այնպես էլ «հաղորդակցում», ինչպես «պաշար», այնպես էլ «ռեսուրս» բառերին:

Այս ամենով հանդերձ, գտնում ենք, որ ներկայացված ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈՀ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, ինչը հիմք է տալիս եզրակացնել, որ Մարինե Շահբազյանը՝ «Արդի հասարակության տեղեկատվայնացման շարժիչ ուժերը և տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրը. սոցիալ-փիլիսոփայական վերլուծություն» ատենախոսության համար արժանի է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի աստիճանի:

Եզրակացություն

Մարինե Կարապետի Շահբազյանի «Արդիհասարակության տեղեկատվայնացմ անշարժիչ ուժերը և տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրը. սոցիալ-փիլիսոփայական վերլուծություն» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի և ԲՈՀ-ի կողմից Թ.00.01. «Փիլիսոփայություն (փիլիսոփայական գիտություններ)» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է գիտական աստիճանի շնորհմանը:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
Փիլիսոփայության ամբիոնի վարիչ,
փիլ. գիտ. թեկն.,

դոցենտ Գ. Է. Գալիկյան

Քարտուղար Դ. Ա. Ասրյան

Վերոհիշյալ ստորագրությունները հաստատում եմ
Հայ - Ռուսական (Սլավոնական) համալսարանի գիտական քարտուղար,

բան. գիտ. թեկն. Ռ. Ս. Կասաբաբովա